ՀԱՎԱՏԻ ՉԱՓԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ՄԵՋ

Հռոմեացիներին ուղղված նամակի 12-րդ գլուխը շրջադարձային կետ է ամբողջ գրքում: Առաջին տասնմեկ գլուխներում Պողոս առաքյալը ներկայացնում է Աստծո փրկարար շնորհը, իսկ 12-րդ գլխից սկսում է ցույց տալ, թե ինչպես պետք է այդ շնորհը փոխի հավատացյալի կյանքը:

«Եվ եղե՛ք խոսքի կատարողներ, այլ ոչ թե միայն լսողներ...»: (Հակոբոս 1.22)

*Հետաքրքիր է, որ այս գլխում Պողոսը **երեք անգամ** խոսում է **մարմնի** մասին, և յուրաքանչյուր անգամ այն ավելի խոր իմաստ է ստանում:*

1. *Մեր անձնական մարմնից*
2. *Քրիստոսի Մարմնին՝ Եկեղեցուն*
3. *Եվ այն հավատի չափին, որով մենք ծառայում ենք Քրիստոսի Մարմնի մեջ:*

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ. ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐ 12.3–8

1 *Արդ Աստծու ողորմածությամբ աղաչում եմ ձեզ, եղբայրնե՛ր, որ **ձեր մարմինները** մատուցեք կենդանի զոհ՝ սուրբ և աստվածահաճո. դա է ձեր հոգևոր պաշտամունքը:* ***2*** *Եվ մի՛ կերպարանվեք այս աշխարհի կերպարանքով, այլ վերափոխվե՛ք ձեր մտքի նորոգությամբ, որպեսզի դուք քննեք Աստծու կամքը, թե որն է բարին, հաճելին ու կատարյալը:*

3 Աստծու շնորհով, որ տրված է ինձ, ասում եմ ձեզանից յուրաքանչյուրին. ինքներդ ձեր մասին չափից ավելի մի՛ հոգացեք, այլ մտածե՛ք պարկեշտ մնալ այնպես, ինչպես որ Աստված ամեն մեկին իր հավատի չափը բաժին հանեց:

*4 Ինչպես որ **մեկ մարմնի մեջ** բազում անդամներ ունենք, և այդ բոլոր անդամները նույն գործառույթը չունեն, 5 այնպես էլ շատերս **մեկ մարմին ենք Քրիստոսի մեջ**, բայց ամեն մեկս միմյանց անդամ ենք:*

6 Միայն թե զանազան պարգևներ ունենք ըստ այն շնորհի, որ մեզ տրված է. եթե դա մարգարեության շնորհն է, թող հավատի չափով գործածի, 7 եթե ծառայության, թող ծառայության մեջ լինի, եթե մեկը ուսուցանող է, թող ուսուցանելու մեջ լինի, 8 թե հորդորող է, հորդորանքի մեջ, թե բաշխող է, թող զվարթությամբ կատարի, թե վերակացու է կարգված, ջանասիրությամբ, թե ողորմած է, ուրախությամբ, 9 թող սերը առանց կեղծիքի լինի. չարն ատե՛ք և բարո՛ւն հետևեք:

- *Նախ՝ Հոհասեղանը, Ապա՝ Ծառայությունը...*

ՆՎԻՐԻՐ ՔՈ ՄԱՐՄԻՆԸ ԱՍՏԾՈՒՆ – ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Հռ. 12.1-2 – ...ձեր մարմինները ներկայացնեք որպես կենդանի, սուրբ և Աստծուն հաճելի զոհ...

> *Պողոսը չի ասում՝ Աստծուն տվեք միայն ձեր սրտի մի մասը, ձեր ժամանակի մի մասը կամ ձեր ունեցվածքի մի մասը:*

Նա ասում է՝ «ձեր մարմինները մատուցեք»: Այլ խոսքով՝ ամբողջովին հանձնեք ձեզ Աստծուն:

Ղուկաս 9.23 – Եթե մեկը կամենում է իմ հետևից գալ, թող ուրանա իր անձը, ամեն օր վերցնի իր խաչը և հետևի ինձ:

*Մատթեոս 19.27-29 – **27** Այդ ժամանակ Պետրոսն ասաց Հիսուսին. Ահա մենք ամեն ինչ թողեցինք ու եկանք քո հետևից. հիմա մեզ ի՞նչ կլինիե: Հիսուսը նրանց ասաց. ...**29** Ամեն ոք, ով իմ անվան համար թողել է տունը կամ եղբայրներին, կամ քույրերին, կամ հորը, կամ մորը, կամ կնոջը, կամ զավակներին, կամ արտերը, հարյուրապատիկը կստանա ու հավիտենական կյանքը կժառանգի:*

Pastor Derek & Tammy Walker – Her Mother's passing...

Մատթեոս 22:37-39 – Հիսուսը նրան ասաց. Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով, քո ամբողջ մտքով (Բ Օր. 6.5): Սա է առաջին ու ամենամեծ պատվիրանը: Երկրորդը նման է սրան. Սիրի՛ր քո ընկերոջը, ինչպես ինքդ քեզ:

- *Հին Կտակարանի ողջակեզը ամբողջությամբ դրվում էր զոհասեղանի վրա և ամբողջությամբ այրվում էր Աստծու համար:*
- *Միայն զոհասեղանին դրված մարմնի մեջ է Աստծո տված հավատը լիարժեք գործում:*

Գաղ. 2.20 – Եվ ողջ եմ, բայց դա այլևս ես չեմ, այլ Քրիստոսն է ողջ իմ մեջ: ԵԹԵ հիմա ապրում եմ մարմնով, ապրում եմ Աստծու Որդու հավատով, որ ինձ սիրեց ու ինքն իրեն ինձ համար զոհեց:

Հռոմեացիներ 12.4 – այնպես էլ շատերս մեկ մարմին ենք Քրիստոսի մեջ, բայց ամեն մեկս միմյանց անդամ ենք:

ՄԵՆՔ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄԻՆՆ ԵՆՔ – ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆ

«Մենք, որ շատ ենք, մեկ մարմին ենք Քրիստոսի մեջ...»

Ուշադրություն դարձրեք հերթականությանը.

Նախ՝ Տուր քո մարմինը Աստծուն: Հետո՝ Հասկացիր, որ դու Քրիստոսի Մարմնի անդամ ես:

- *Այստեղ Պողոսը փոխում է իր ուշադրությունը:*
- *Նա խոսում է ոչ թե մեր անձնական մարմնի, այլ **Քրիստոսի Մարմնի** մասին:*
- *Քրիստոնեությունը երբեք նախատեսված չի եղել միայնակ ապրելու համար:*

Յուրաքանչյուր հավատացյալ ունի իր տեղը:

Յուրաքանչյուր անդամ արժեքավոր է:

Յուրաքանչյուր անդամ անհրաժեշտ է:

Աչքը չի կարող ասել ձեռքին. «Քո կարիքը չունեմ»:

Նույն կերպ ոչ մի ծառայություն մյուսից բարձր չէ:

Պարգևները զանազան են, բայց մարմին մեկէ:

Կող. 1.18 – Եվ նա է մարմնի, այսինքն՝ եկեղեցու գլուխը. նա է սկիզբը, մեռելներից անդրանիկը, որպեսզի ամեն բանում նա լինի առաջինը:

*Եփ. 4.15-16 – այլ սիրո մեջ ճշմարիտ լինելով՝ ամեն բանով աճենք դեպի նա, որ գլուխն է, դեպի Քրիստոսը, որից ամբողջ մարմինը՝ միասնական ու ներդաշնակ, բոլոր հոդերի օգնությամբ, յուրաքանչյուր **անդամի ներգործության չափով**, աճում է՝ ինքն իրեն սիրո մեջ հաստատելու համար:*

ՀԱՎԱՏԻ ՉԱՓԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐՄՆԻ ՄԵՋ – ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

3 *Աստված ամեն մեկին իր հավատի չափը բաժին հանեց:*

Մատթեոս 17.20 – ...Եթե մանանեխի հատի չափ հավատք ունենաք...

Պողոսը սովորեցնում է, որ Աստված յուրաքանչյուր հավատացյալի տվել է հավատքի չափ, որպեսզի այդ հավատը գործի Քրիստոսի Մարմնի շինության համար:

Աստված յուրաքանչյուրին տվել է հավատի չափ, և այդ հավատի համաձայն յուրաքանչյուրին վստահել է իր ծառայությունը՝ լինի մարգարեություն, ուսուցում, հորդոր, նվիրատվություն, առաջնորդություն կամ ողորմածություն:

ԻՆՉՈ՞Ւ Է ՊՈՂՈՍՆ ԱՅՍՏԵՂ ԽՈՍՈՒՄ ՀԱՎԱՏԻ ՄԱՍԻՆ

- *Որովհետև ամեն ծառայություն <u>հավատ է պահանջում</u>:*

  Երեխաներին ծառայելը՝ հավատ է պահանջում...

  Քարոզելը՝ հավատ հավատ է պահանջում...

  Հիվանդների համար աղոթելը հավատ է պահանջում...

  Առատաձեռնորեն տալը՝ հավատ է պահանջում...

- *Աստված երբեք մեզ չի կանչում ծառայելու մեր սեփական ուժերով:*

  Նա տալիս է և՛ պարգևը, և՛ անհրաժեշտ հավատը այդ պարգևը գործադրելու համար:

ԻՆՉ ՏԵՍՔ ՈՒՆԻ ՀԱՎԱՏԻ ՉԱՓԸ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ

Հավատի չափը նշանակում է շարունակել ապրել և ծառայել Քրիստոսի Մարմնի մեջ նույնիսկ այն ժամանակ, երբ կյանքը ծանր է:

- ***Հոբը շարունակում էր երկրպագել:***

Հոբ 1.20-21 – Այն ժամանակ Հոբը վեր կացավ, պատռեց իր վերարկուն, սափրեց իր գլուխը, գետին ընկավ և երկրպագեց: Եվ ասաց. Մերկ դուրս եկա իմ մոր որովայնից, մերկ էլ այնտեղ պիտի վերադառնամ: Տերը տվեց, Տերը վերցրեց. ***օրհնյալ լինի Տիրոջ անունը:***

Հոբը չերկրպագեց, որովհետև ամեն ինչ լավ էր:

Նա երկրպագեց, որովհետև Աստված արժանի էր երկրպագության:

Հավատի չափը չի փոխվում հանգամանքների հետ:

- ***Պողոսն ու Շիղան. ծեծված էին, շղթայված էին, բանտում էին...***

Բայց կեսգիշերին նրանք աղոթում և երգում էին Աստծուն:

Նրանք փառաբանում էին հրաշքից առաջ:

- ***Հավատի չափը շարունակում է հնազանդվել...***

Աբրահամ – Աստված մեզ հայտնում է վերջնական նպատակը, բայց քայլ առ քայլ է բացում այնտեղ տանող ճանապարհը:

Եբրայեցիներ 11.17-19 – Նա հավատում էր, որ Աստված նույնիսկ կարող է հարություն տալ Իսահակին:

- ***Հավատի չափը շարունակում է ներել***

  Ստեփանոսին քարկոծում էին: Նրա վերջին խոսքերից մեկն էր.

  «Տե՛ր, այս մեղքը նրանց մի՛ համարիր»:

  Սա մարդկային ուժ չէր: Սա Աստծո տված հավատի չափի գործելն էր:

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: